



Հաստատված է՝

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդին առընթեր գիտա-վերլուծական
կենտրոնի խորհրդի 25.04.2013 թ. № 3-Ա որոշմամբ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԵՎ ԱՐԱՍ ԲԱՐԵՂԱՍՅԱՆԻ
ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ԳՐԱՎՈՐ ՄԵՎՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
(AMICUS CURIAE)**

№ 03-13-Ա

ք.Երևան

25.04.2013 թ.

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդին առընթեր գիտա-վերլուծական կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) խորհուրդը, մասնակցությամբ համակարգող Արա Ջոհրաբյանի, քարտուղար Իրինա Փիլոյանի, նորմատիվ իրավական ակտերի փորձաքննության հարցերի հանձնաժողովի նախագահ Գևորգ Գյոզալյանի, Պալատի ներքին իրավական ակտերի փորձաքննության հարցերի հանձնաժողովի նախագահ Լիլիթ Գրիգորյանի,

քննարկելով ՀՀ սահմանադրական դատարանում քննության ընդունված «Քաղաքացիներ Աշոտ Մանուկյանի և Արամ Բարեղամյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 2-րդ մաս՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործերով ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը, ստալիս է սույն գրավոր մեկնաբանությունները հետևյալի մասին.

Հարցի կարևորությունը.

Սույն սահմանադրական գործով դիմողների կողմից բարձրացված իրավական խնդիրը վերաբերում է նոր հանգամանքով դատական ակտերի

վերանայման ինստիտուտին, մասնավորապես՝ նոր հանգամանքի հիմքով դատական ակտերի վերանայման վարույթի արդյունքում ընդունվելիք դատական ակտի եզրափակիչ մասի բովանդակությանը:

Հարկ է նշել, որ սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներով անդրադարձ է կատարել նոր հանգամանքի հիմքով դատական ակտերի վերանայման վարույթին, արտահայտելով մի շարք սկզբունքային իրավական դիրքորոշումներ Հայաստանի Հանրապետության դատավարական օրենսդրությունում (թե՛ քրեական և թե՛ քաղաքացիական) նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի, դրա արդյունավետության ու կենսունակության չափանիշների, ինչպես նաև՝ այդ ինստիտուտի միջոցով անձի սահմանադրական իրավունքների իրացման համար անհրաժեշտ իրավական երաշխիքների վերաբերյալ ¹:

Միջամտությունների (մեկնաբանությունների շրջանակը).

Սույն միջամտության շրջանակում Կենտրոնն անդրադարձ է կատարելու այն իրավական հարցադրմանը, թե *որքանո՞վ է իրավաչափ դատարանների կողմից նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման վարույթի արդյունքում կայացվելիք դատական ակտով վերանայված դատական ակտի եզրափակիչ մասը չփոխելու լիազորությունը:*

Վիճարկվող նորմի մեկնաբանությունը.

1. Սույն սահմանադրական գործով վիճարկվում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 426.9-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավական նորմը (այսուհետ՝ Վիճարկվող նորմ), համաձայն որի՝
«2. Այդ վարույթի արդյունքում կայացված դատական ակտում դատարանը կարող է չփոփոխել վերանայված դատական ակտի եզրափակիչ մասը, միայն եթե ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ սույն օրենսգրքի 426.3 կամ 426.4 հոդվածներով նախատեսված հանգամանքներն ըստ էության չէին կարող ազդել գործի ելքի վրա:»:
2. Սույն գրավոր մեկնաբանությամբ Կենտրոնն անդրադարձ չի կատարի նոր հանգամանքի հիմքով դատական ակտերի վերանայման վարույթի էությանը, քանի որ ինչպես վերը նշվեց, սահմանադրական

¹ Տե՛ս՝ ՍԴՈ-701, ՍԴՈ-751, ՍԴՈ-758, ՍԴՈ-767, ՍԴՈ-833, ՍԴՈ-935, ՍԴՈ-943 որոշումները:

դատարանն արդեն անդրադարձ է կատարել այս ինստիտուտի իրավական բովանդակությանը:

3. Սույն մեկնաբանության շրջանակում Կենտրոնն անհրաժեշտ է համարում պարզել նոր հանգամանքի հիմքով դատական ակտերի վերանայման վարույթում **դատարանների լիազորությունների բնույթը** և պատասխանել այն իրավական հարցադրմանը, թե **որքանո՞վ է իրավաչափ դատարանների կողմից նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման վարույթի արդյունքում կայացվելիք դատական ակտով վերանայված դատական ակտի եզրափակիչ մասը չփոխելու լիազորությունը:**
4. Օրենսգրքի՝ «Դատական ակտերի վերանայումը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով» վերտառությամբ 49.¹ գլխում ամրագրված իրավական նորմերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՀՀ դատավարական օրենսդրությամբ առանձին կարգավորում նախատեսված չէ այն հարցի վերաբերյալ, թե ի՞նչ լիազորություններով են դատարաններն օժտված նոր կամ նոր երևան եկած հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման վարույթով գործերի քննության ընթացքում:
5. Օրենսգրքի 394-րդ և 419-րդ սահմանվում են համապատասխանաբար վերաքննիչ և վճռաբեկ դատարանների լիազորությունների շրջանակը, որոնք պայմանականորեն կարելի է անվանել **«ընդհանուր»** լիազորություններ: Դրանցից են բողոքը մերժելը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, դատական ակտը մասնակիորեն կամ ամբողջությամբ բեկանելը և ստորադաս դատարանի ակտը փոփոխելը, ամբողջությամբ կամ մասնակիորեն դատական ակտը բեկանելը և գործի վարույթը կարճելը և այլն:
6. Վերլուծելով Վիճարկվող նորմը, ինչպես նաև նոր հանգամանքով դատական ակտի վիճարկման ինստիտուտի վերաբերյալ ձևավորված իրավակիրառական պրակտիկան, Կենտրոնը մտահոգություն է հայտնում այն առումով, որ Սահմանադրությանը հակասող նորմի հիման վրա կայացված դատական ակտի եզրափակիչ մասը չփոխելու լիազորությունը կարող է չարաշահումների տեղիք տալ: Օրինակ, գործնականում կարող է լինել իրավիճակ, երբ դատարանը գործը քննել

և վեճը լուծել է ղեկավարվելով ընդամենը մեկ իրավական նորմով, որը հետագայում ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր: Այստեղ առաջանում է այն հարցը, թե տվյալ դեպքում, երբ կողմը դիմել է նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման վարույթ հարուցելու խնդրանքով, և վերջինիս դիմումը վարույթ է ընդունվել, դատարանը ինչպե՞ս պետք է լուծի այն խնդիրը, որն առաջացել է գործի քննության հիմքում դրված միակ իրավական նորմը հակասահմանադրական և անվավեր ճանաչելու հետևանքով:

7. Կենտրոնը կարևոր է համարում սույն գրավոր մեկնաբանության շրջանակում քննարկել նաև նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման դեպքում գործի քննության ծավալի հարցին: Այստեղ կարելի է համեմատական անցկացնել վերաքննության կամ վճռաբեկության կարգով բերկանված և ստորադաս դատարան նոր քննության ուղարկված գործերի քննության ծավալի հետ: Գործող քրեական դատավարության օրենսգրքում (ինչպես նաև՝ քաղաքացիական դատավարության օրենսգրքում) չի նախատեսվում կարգավորում, որն ուղղված է բեկանված գործերի քննության ծավալ նախատեսելուն և դրանց քննության առանձնահատկություններին: Այդուհանդերձ՝ փաստ է, որ նման վարույթում ստորադաս դատարանն արդեն կաշկանդված է վերադաս դատական ատյանի կողմից տրված «ցուցումներով», և պարտավոր է գործի քննությունն իրականացնել այն ծավալով, որն ամրագրվել է վերադաս դատարանի դատական ակտով:
8. Այստեղ անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման վարույթ հարուցելիս, ***դատարանները պետք է կաշկանդված լինեն տվյալ վարույթի հարուցման համար հիմք հանդիսացող նոր հանգամանքով***, և սահմանադրական դատարանի կողմից արտահայտած իրավական դիրքորոշումները պետք է պարտադիր լինեն դատարանների համար՝ նոր հանգամանքով վերանայման վարույթ հարուցելիս և նոր դատական ակտ կայացնելիս:
9. Կարծում ենք, որ վերանայման վարույթի արդյունքում դատական ակտ կայացնելիս առվել ***«ծանրակշիռ փաստարկ է»*** այն հանգամանքը, որ այն իրավական նորմը, որի հիման վրա լուծվել է վեճը, ճանաչվել է հակասահմանադրական կամ ճանաչվել է սահմանադրությանը

համապատասխանող, սակայն սահմանադրական դատարանը բացահայտել է դրա իրավական բովանդակությունը գտնելով, որ տվյալ նորմը գործնականում կիրառվել է այլ մեկնաբանությամբ:

10. ՀՀ սահմանադրական դատարանն իր 15.04.2008 թ.-ի ՍԴՈ-751, 09.09.2008 թ.-ի ՍԴՈ-758, 23.02.2010 թ.-ի ՍԴՈ-866 որոշումներում արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «...Սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետով երաշխավորված՝ սահմանադրական դատարանն զինվելու անձի իրավունքի արդյունավետ իրացումը պահանջում է սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտերի վերանայման այնպիսի լիարժեք օրենսդրական կարգավորում, որը հնարավորություն կտա անձին վերականգնելու սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմատիվ ակտի կիրառման արդյունքում խախտված իր սահմանադրական իրավունքը: ... Ուստի սահմանադրական դատարանը գտնում է, որ նոր հանգամանքների հիման վրա դատական ակտի վերանայման հետ կապված իրավահարաբերությունների օրենսդրական կարգավորման նպատակը պետք է լինի ինչպես արդարադատության մատչելիությունը, այնպես էլ անձանց սահմանադրական իրավունքների դատական պաշտպանության արդյունավետության ապահովումը, որոնց օրենսդրորեն հստակեցնելը կմեծացնի վստահությունն արդարադատության նկատմամբ, մարդկանց հնարավորություն կտա առավել երաշխավորված ու արդյունավետ իրացնել դատական պաշտպանության իրենց սահմանադրական իրավունքը:

11. Այս առումով, Եվրոպական դատարանը Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի² գործով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական» Կոնվենցիայի 6-րդ հոդվածի³ վերաբերյալ նշել է՝ «6-րդ հոդվածի 1-ին կետը յուրաքանչյուրի համար երաշխավորում է իր քաղաքացիական իրավունքների և պարտականությունների վերաբերյալ դատարան կամ տրիբունալ հայց ներկայացնելու իրավունք. այս ձևով է

² St' u Burdov v. Russua, Judgment of 7 May 2002.

³ Արդար դատաբնության իրավունք.

մարմնավորվում «դատարանի իրավունքը», որի ասպեկտներից մեկը դատարան ղիմելու իրավունքն է, այն է՝ քաղաքացիական գործերով դատարան հայց ներկայացնելու իրավունքը: Այնուամենայնիվ, այս իրավունքը կլինի անհրազեկ, եթե Պայմանավորվող պետության ներպետական իրավական համակարգը թույլ տա, որ դատարանի վերջնական, պարտադիր որոշումը մնա չգործող՝ ի վնաս կողմերից մեկի:

Եզրակացությունը.

Իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոցների շարքում առանձնակի կարևորությամբ է օժտված արդարադատության մատչելիության (դատական պաշտպանության) իրավունքը, քանի որ այն իրականացվում է իշխանությունների տարանջատման համակարգում ինքնուրույն և անկախ կարգավիճակ ունեցող մարմնի՝ դատարանի կողմից՝ օրենսդրությամբ հստակ սահմանված ընթացակարգով:

Այս իրավունքը բնութագրվում է որպես անձի՝ հիմնական անօտարելի իրավունքներից մեկը և միաժամանակ՝ որպես այլ իրավունքների իրականացման և պաշտպանության երաշխիք:

Արդարադատության մատչելիության իրավունքի ինքնուրույն տարր է հանդիսանում անձի իրավունքը օրենքով նախատեսված հանգամանքների առկայության պարագայում նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման վարույթ հարուցելու, և Կենտրոնի համոզմամբ վիճարկվող նորմը խնդրահարույց կարգավորում է նախատեսում՝ այդ իրավունքի արդյունավետ իրացումն ապահովվելու հետ:

Պետք է փաստել, որ ինչպես արդարացիորեն նշել է ՀՀ սահմանադրական դատարանը՝ *«... նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման արդյունքում նախորդ դատական ակտն ուժի մեջ թողնելու»⁴ դատարանի լիազորության օրենսդրական կարգավորման դեպքում պետք է հաշվի առնվի, որ օրենքի դրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին սահմանադրական դատարանի որոշման առկայության պարագայում նոր հանգամանքների հիմքով վերանայվող դատական ակտը բոլոր դեպքերում ուժի մեջ մնալ չի կարող, քանի որ այդ ակտով կիրառվել է հակասահմանադրական իրավանդում...»:*

⁴ Տվյալ դեպքում կարծում ենք, որ *դատարանի՝ վերանայվող դատական ակտի եզրափակիչ մասը չփոխելու լիազորությունը հավասարազոր է այդ ակտն օրինական ուժի մեջ թողնելու լիազորությանը (մեկնաբանությունը մերն է):*

Ամփոփելով վերոգրյալը, Կենտրոնն արձանագրում է, որ դատարանները, վերանայման վարույթի կարգով գործը քննելիս, պետք է կաշկանդված լինեն նոր հանգամանքով, և բոլոր այն դեպքերում, երբ սահմանադրական դատարանի կողմից համապատասխան իրավանորմը ճանաչվել է Սահմանադրությանը հակասող և անվավեր, կամ անդրադարձ կատարելով համապատասխան նորմի մեկնաբանությանը և դրա կապակցությամբ ձևավորված իրավակիրառ պրակտիկային, սահմանադրական դատարանը գտել է, որ համապատասխան նորմը կիրառվել է այլ մեկնաբանությամբ, վերանայված ակտի եզրափակիչ մասը չփոխելու լիազորությունը, որը համարժեք է այդ ակտն ուժի մեջ թողնելուն, անհնարին է, որովհետև արդարադատության հիմքում դրվել է ու կշարունակի ուժի մեջ մնալ հակասահմանադրական և անվավեր ճանաչված իրավանորմը:

Համակարգող՝

Արա Զոհրաբյան

քարտուղար՝

Իրինա Փիլոյան